

ԱՌԻՐ ԶԱՏԻԿ
2006



Բովանդակութիւն.

- Յարութեան Աստուածաշնչեան Ընթերցումներ.
- Կապակցում Ընթերցումների միջեւ.
- Վարդապետական Պատգամ.
- Հովուական մտորումներ:

ՅԱՐՈՒԹԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆՉԵԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գործք Առաքելոց 10, 34-43

Պետրոսը սկսեց ասել. «Այժմ ճշմարտապէս հասկանում եմ, որ Աստուած խտրութիւն չի դնում մարդկանց միջեւ, այլ բոլոր ազգերից էլ ընդունում է որեւէ մէկին, որ երկնչում է Իրենից եւ արդար գործեր է կատարում: Նա Իր պատգամն ուղարկեց իսրայէլացիներին, աւետելով այն հաշտութիւնը, որը գալու էր Յիսուս Քրիստոսի ձեռքով, որը Տէրն է բոլորի: Դուք արդէն գիտէք այն՝ ինչ տեղի ունեցաւ Գալիլիայից սկսած ամբողջ Հրէաստանում, Յովհաննէսի կողմից քարոզուած մկրտութիւնից յետոյ: Ակնարկում եմ Յիսուսին, որ Նազարէթից էր. Աստուած Նրան օծեց Սուրբ Հոգիով եւ զօրութեամբ, եւ Նա շրջեց բարիք անելով ու սատանայի կողմից տանջուածներին բժշկելով, որովհետեւ Աստուած Նրա հետ էր: Մենք վկայ ենք այն ամէնին, որ նա կատարեց Հրէաստան երկրում եւ Երուսաղէմում: Նրան սպանեցին՝ խաչափայտից կախելով: Բայց Աստուած երրորդ օրը յարութիւն տուեց Նրան եւ կամեցաւ՝ որ Նա յայտնուի ո՛չ թէ ամբողջ Ժողովրդին, այլ մեզ՝ վկաներիս, որ սկզբից ընտրուած էինք Աստուծոց, եւ կերանք ու խմեցինք Յիսուսի հետ, մեռելներից Նրա յարութիւն առնելուց յետոյ: Եւ Յիսուս մեզ պատուիրեց քարոզել Ժողովրդին եւ վկայութիւն տալ՝ որ Ինքն է Աստուծոց սահմանուած Դատաւորը, որ դատելու է ողջերին ու մեռածներին: Բոլոր մարգարէները Նրա մասին վկայում են, որ Նրան հաւատացողներն իրենց մեղքերին թողութիւն պիտի ստանան Նրա Անունով:

Սաղմոս 118 [117]

¹ Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը. Նա բարի է, Նրա սէրը յաւիտենական է:

² Իսրայէլն, ուրեմն, թող հռչակի.
«Նրա սէրը յաւիտենական է»:

³ Ահարոնի սերունդը թող հռչակի.
«Նրա սէրը յաւիտենական է»:

⁴ Տիրոջ հաւատացեալները թող հռչակեն.
«Նրա սէրը յաւիտենական է»:

⁵ Նեղութեանս մէջ աղաղակեցի Տիրոջը,
Տէրը լսեց ինձ.

⁶ Տէրն ինձ հետ է, չեմ վախենում,
ի՞նչ կարող է անել ինձ մարդը.

⁷ Տէրն ինձ հետ է ինձ օգնելու համար,
թշնամիներիս կը դիմադրաւեմ:

⁸ Աւելի լաւ է ապաւինել Տիրոջը՝
քան վստահել մարդուն.

⁹ աւելի լաւ է ապաւինել Տիրոջը՝
քան վստահել հզօրներին:

¹⁰ Կռապաշտները շրջապատեցին ինձ,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց.

¹¹ չորս կողմից մօտեցան ու շրջապատեցին ինձ,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց:

¹² Չորս կողմս բռնեցին իշամեղուների նման,
Տիրոջ Անունով ոչնչացրեցի նրանց.
այրուեցին՝ կրակ նետուած չոր ցախի նման:

¹³ Ուժով հրեցին ինձ, որպէսզի ընկնեմ,
բայց Տէրն օգնեց ինձ.

¹⁴ Իմ ուժն ու իմ երգը Տէրն է,
Նա է իմ փրկութիւնը:

¹⁵ Ուրախութեան եւ փրկութեան աղաղակներ են բարձրանում
արդարների վրաններից.

«Տիրոջ աջը հրաշքներ է գործում,

¹⁶ Տիրոջ աջը բարձրացնում է,
Տիրոջ աջը հրաշքներ է գործում»:

¹⁷ Խուսափեցի մահից եւ ապրելու եմ,
աւետարանելու համար Տիրոջ գործերը.

¹⁸ Հարուածեց ինձ, Տէրը հարուածեց ինձ,
բայց չյանձնեց ինձ մահուան ձեռքը:

¹⁹ Բացէք իմ առջեւ արդարութեան դռները,
գալիս եմ Տիրոջը շնորհակալ լինելու.

²⁰ «Սա է Տիրոջ դուռը,
նրանից ներս են մտնելու արդարները».

²¹ Երախտագիտութիւն եմ մատուցում Քեզ, որովհետեւ լսեցիր ինձ,
Դու ես իմ փրկութիւնը:

²² Շինարարների կողմից մերժուած քարը
անկեան գլխաւոր քարը դարձաւ.

²³ սա Տիրոջ կողմից կատարուեց
եւ հիանալի է մեր աչքերի առաջ.

²⁴ սա Տիրոջ պատրաստած օրն է,
նրանում ցնծանք եւ ուրախ լինենք:

²⁵ Տէր, խնդրում ենք Քեզ, փրկիր մեզ,
Տէր, խնդրում ենք Քեզ, յաղթանակիր.

²⁶ օրհնեալ է Նա՝ ով գալիս է Տիրոջ Անունով:

«Օրհնում ենք ձեզ Տիրոջ բնակավայրից.

²⁷ Աստուած, Տէրը, թող լուսաւորի մեզ»:

«Ձեր ձեռքերին ճիւղեր, թափօր կազմեցէք,
մինչեւ խորանի անկիւնները»:

²⁸ Դու իմ Աստուածն ես,
եւ ես երախտագիտութիւն եմ յայտնում Քեզ,
Իմ Աստուածն ես, եւ ես մեծարում եմ Քեզ.

²⁹ Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը. Նա բարի է,
Նրա սէրը յաւիտենական է:

Պօղոս Առաքեալի Նամակը Կողոսացիներին 3, 1-4

Քանի որ յարութիւն առաք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը դարձրէք դէպի երկինք, որովհետեւ այնտեղ է Քրիստոսը, Հայր Աստծոյ աջ կողմում նստած: Երկնաւոր բաների մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաների, որովհետեւ դուք այս աշխարհի համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրէք այն կեանքով, որ Աստուած վերապահել է ձեր համար: Իսկ երբ Քրիստոսը՝ ձեր կեանքը յայտնուի, այն ժամանակ դուք էլ փառքով կը յայտնուէք Նրա հետ:

Յովհաննէսի Աւետարան 20, 1-9

Կիրակի օրն արշալոյսին, երբ տակաւին մուտ էր, Մարիամ Մագդաղենացին գնաց գերեզման եւ տեսաւ, որ գերեզմանի մուտքին դրուած քարը վերցուած է: Ուստի վազելով գնաց Սիմոն Պետրոսի եւ միւս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր, եւ ասաց նրանց.

«Տիրոջը վերցրել են գերեզմանից, եւ չգիտենք՝ թէ ուր են դրել Նրան»:

Այս խօսքի վրայ Պետրոսը եւ միւս աշակերտը ելան եւ ճանապարհ ընկան դէպի գերեզման: Երկուսով միասին վազում էին, բայց միւս աշակերտը, աւելի արագ վազելով, Պետրոսից առաջ հասաւ գերեզման եւ կռանալով տեսաւ, որ միայն կտաւներն էին այնտեղ, սակայն ներս չմտաւ: Հասաւ նաեւ Սիմոն Պետրոսը, որ նրա ետեւից էր գալիս, ներս մտաւ եւ տեսաւ, որ կտաւներն այնտեղ էին, իսկ վարչամակը, որ Նրա գլխին էր, միւս կտաւների հետ չէր, այլ ծալուած եւ առանձին միկողմ էր դրուած: Այն ժամանակ միւս աշակերտն էլ, որ աւելի առաջ էր հասել գերեզման, ներս մտաւ, տեսաւ եւ հաւատաց. քանի որ դեռ չէին հասկացել Սուրբ Գրքի այն խօսքը, որի համաձայն Նա պէտք է մեռելներից յարութիւն առնէր:

ԿԱՊԱԿՅՈՒՄ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Տիրոջ Յարութեան հանդէպ հաւատքը այսօրուայ հիմնական նիւթն է: «Այսօր Քրիստոս Տիրոջ օրն է», երգում է Սաղմոսը: Գերազանց, Գերագոյն, Աւագ Կիրակին է: Օրն է, երբ մահուանը յաղթելով՝ ցոլցաբերեց իր ամենակարող զօրութիւնը, եւ հետեւաբար՝ բերկրանքի ու ցնծութեան օր է բոլոր քրիստոնեաների համար: Իր խօսքերում, Պետրոս Առաքեալը հաստատում է՝ որ իրեն տրուել է Քրիստոսի Յարութիւնը աւետելու եւ քարոզելու յանձնարարութիւնը: Առաքեալները վկաներն են, որոնք տեսել են Յարուցեալին, նրա հետ սեղան են նստել, կերակուր եւ խմիչք ճաշակել: Նրանք յանձնարարութիւն են ստացել քարոզելու, որ Յարուցեալն Քրիստոս հաստատուել է ողջերի ու ննջեցեալների Դատաւոր: Պօղոս Առաքեալն ընդգծում է, յատկապէս, որ Տիրոջ Յարութիւնը մի նոր կեանք է սկզբնաւորում մկրտուածի հոգում: Քրիստոնեան նա է, որ մահացել է Քրիստոսի հետ եւ Նրա հետ յարութիւն է առել նոր կեանքի համար: Յարութեան հաւատքը Պօղոս Առաքեալի համար անսասան վէմն է, վայրը՝ որի վրայ է հիմնուում իր ամբողջ առաքելական նուիրումը, եռանդն ու ծառայութիւնը: Աւետարանը մատնանշում է, որ Պետրոսն ու Յովհաննէսը, գերեզման մտնելով՝ «տեսան ու հաւատացին»: Դատարկ գերեզմանը նրանց համար սկզբնակէտն է մտորումների ու խորհրդածութեան, որոնցով առաջնորդուելու եւ հասնելու էին Յարուցեալ Քրիստոսի հանդէպ հաւատքին:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ա) Քրիստոս յարութիւն է առել: «Յիսուսի Յարութիւնը Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի գազաթնակէտը հանդիսացող ճշմարտութիւնն է». սա՛ է Եկեղեցու մնայունը

ուսուցումը: Առաջին ժամանակների քրիստոնեայ համայնքները այս ճշմարտութիւնն ապրում էին որպէս իրենց գոյութեան կենտրոնը. նրանց բոլոր համոզմունքները, բոլորին յայտնի մարդասիրութիւնը, մարտիրոսութեան առաջ զգացուած ու ապրուած անվրդով կեցուածքը, Սուրբ Պատարագի հանդէպ սէրը ... : Ամէն ինչի հիմքը, վերջնական վերլուծմամբ, Քրիստոսի զատկական խորհուրդն էր, նրա մահն ու նրա յարութիւնը: «Եթէ Քրիստոս յարութիւն չի առել, ունայն է ձեր հաւատքը», մեկնաբանում է Պօղոս Առաքեալը (1Կր 15, 17):

Ինչպէս քրիստոնեայ առաջին համայնքներն էին ապրում Տիրոջ յարութեան հանդէպ հաւատքը, նմանապէս այսօրուայ քրիստոնեաներն էլ կանչուած են խոր կերպով ապրելու Յարութեան խորհուրդը իրենց կեանքից ներս: «Եթէ Քրիստոսի հետ յարութիւն էք առել, ջանացէք հասնել վերին իրականութիւններին» (Կղս 3, 1): Հաւատացեալի համար, յարութիւնը՝ Քրիստոսի հանդէպ իր հաւատքի գագաթնակէտը հանդիսացող ճշմարտութիւնն է. Հին Կտակարանի բոլոր խոստումները կատարուել են: Տէրը հաւատարիմ եղաւ իր սիրոյն եւ մեզ նուիրուեց առանց սահմանափակումների, գերառատ կերպով: Յարութեամբ կրկին եւ վերջնական կերպով հաստատուած է Տիրոջ Աստուածութիւնը. ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ Մարդ: Յարութիւնը մեզ ուսուցանում է ամբողջական ճշմարտութիւնը Աստծոյ վերաբերեալ (Աստուած Սէր է) եւ մարդկութեան փրկութեան վերաբերեալ: Քրիստոս, իր զատկական խորհրդի մէջ, մեզ պարզեւում է Աստծոյ յայտնութեան լիութիւնը: Աստծոյ կատարեալ եւ վերջնական ինքնայայտումը: Տեղին է ընդգծել Տիրոջ մահուան եւ յարութեան տիեզերական եւ փրկարար նկարագիրը: Քրիստոս մեռաւ բոլորիս համար, մեզնից իւրաքանչիւրին ներելու համար մեր մեղքերը: Որովհետեւ Աստուած կամենում է, որ բոլոր մարդիկ փրկուեն:

Է) Քրիստոնեան կանչուած է «Քրիստոսի հետ յարութիւն առնելու» եւ «վերին իրականութիւնները փափաքելու»: Քրիստոնեան մի նոր արարած է, հինը վերջացել է, նորը սկսուել է, եւ իր կեանքը Քրիստոսի հետ ծածկուած է Աստծոյ մէջ: Մեր ամէնօրեայ կեանքից շատ հեռո՞ւ է այս հիմնական ճշմարտութիւնը: Երբեմն կարող է թուալ չափազանց գեղեցիկ, այնքան գեղեցիկ՝ որ չի կարող իրական լինել: Մի երազ, մի անհասանելի գաղափար: Կարող է թուալ, թէ մեղքն ու մահը աւելի հզօր են եւ մարդկութիւնը դատապարտում են մի խաւար գոյութեան: Այսու ամենայնիւ, երբ խնդիրը քննում ենք առաւել ուշադրութեամբ, անպատճառ նկատում ենք՝ որ Աստծոյ զօրութիւնն ու սէրը աւելի հզօր են՝ քան մեղքը: «Սէրն աւելի հզօր է» եւ Աստուած մարդկանց սրտերում յարուցանում է դարձի, բարիքի, փոխուելու փափաքներ, եւ իր Աստուածային Նախախնամութեամբ նրանց առաջնորդում է փրկութեան ճանապարհներով: Կենսապէս հաւատալ Տիրոջ Յարութեանը, ապրելու համար նոր կեանք, լի յոյսով, զօրութեամբ, սիրով: Քրիստոսի հետ յարութիւն առնել՝ նշանակում է այլեւս չապրել մեղքի համար, նշանակում է Քրիստոսի հետ մասնակցել Խաչի խորհրդին եւ մարդկանց փրկութեանը, նշանակում է այս կեանքն ապրել պանդուխտ ուխտաւորների նման, դէպի Աստծոյ յաւիտենական Ընտանիքը:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ա) Կանայք առաջինն են, որ յանձնարարութիւն են ստանում աւետելու Յարութիւնը: «Ինչո՞ւ էք մեռեալների մէջ փնտռում նրան, որ կենդանի է: Այստեղ չէ, յարութիւն է առել» (Ղկս 24, 5-6): "Լուսապայծառ զգեստներով" մարդկանց այս խօսքերը կանանց սրտում վերարթնացնում են վստահութիւնը, կանանց՝ որոնք արշալոյսին գնացել էին գերեզման: Անձամբ ապրել էին ողբերգական բոլոր իրադարձութիւնները, որոնք իրենց գագաթնակէտին էին հասել Գողգոթայի բարձրունքին տեղի ունեցած Քրիստոսի խաչելութեամբ: Տրամութեան ու մտամոլոր վիճակի փորձառութիւնն էին ունեցել: Այնու

ամենայնիւ, չարչարանքների պահին չէին լքել իրենց Տիրոջը: Գնում էին այնտեղ, ուր Յիսուս թաղուել էր, մէկ անգամ եւս տեսնելու համար Նրան եւ մի վերջին անգամ եւս գրկելու: Նրանց մղում էր սէրը: Այն նոյն սէրը, որից մղուած հետեւում էին Նրան Գալիլիայի եւ Յուդայի երկրի ճանապարհների վրայ, մինչեւ Գողգոթա: Երանելի՛ կանայք: Տակաւին չգիտէին, որ դա պատմութեան ամենակարեւոր օրուայ արշալոյսն էր: Չգիտէին, որ իրենք, ճիշտ իրենք էին լինելու Յիսուսի Յարութեան առաջին վկաները:

Աւետարանը մեզ ասում է, որ կանայք եղան Տիրոջ Յարութեան առաջին պատգամաբերները, մինչեւ իսկ Առաքեալներից առաջ: Իր կանացիութեան շնորհիւ, կինը կրօնական եւ մարդկային մի յատուկ զգացողութիւն ունի: Առաւել արագ ու բնագոյային մղումով ըմբռնում է կրօնական ճշմարտութիւններն ու մարդկային ճշմարտութիւնները: Սրտաբուխ կերպով յակուած է դէպի կրօնական արժէքը, դէպի մարդկային կեանքի պաշտպանումը, դէպի ամենատկարների հանդէպ տածուած հոգատարութիւնը: Կնոջը տրուել է մահուան նկատմամբ Քրիստոսի կատարեալ յաղթանակին աւետելու պաշտօնը: Կինը փորձառութեամբ զգում է, ինչպէս պատմում է Աւետարանը, հոգու մի իւրայատուկ ուժ, որովհետեւ գիտակցում է՝ որ իրեն ինչ որ կերպ յանձնուել ու վստահուել է մարդկութեան բարիքը:

Մեր ժամանակներում, որոնց բնորոշ յատկութիւններից մէկն է ուժգին յարաբերապաշտութիւնը (ռեւատիվիզմը) եւ հաւատքի կորուստը, քրիստոնեայ հայ կինը կանչուած է կրկին ու կրկին լինելու քրիստոնէական ճշմարտութիւնների նախաշնորհեալ պատգամախօս: Նա է, որ ընտանիքում ճառագայթելու է սէր եւ փոխադարձ ըմբռնում, եւ նա է՝ որ իր ընտանիքը դաստիարակելու է գերբնական արժէքներով: Կարող ենք ասել, որ ընտանեկան օջախում մեծ մասամբ կնոջից է կախուած հաւատքի կեանքը, որովհետեւ կինը այդ հաւատքը աւանդում է ո՛չ միայն իր խօսքերով, այլ նաեւ իր ամբողջ կեանքով, իր դիրքորոշմամբ, իր վարուելակերպով, տառապելու, ներելու իր կարողութեամբ: Ընտանիքում, կամ վանքում, կամ հասարակութեան մէջ, կամ հասարակական կեանքում ու գործերում, կամ հիւանդանոցներում, կամ դպրոցում ... կինն է, որ ներկայ է դարձնում վերանցական արժէքները եւ, ինչը որ ամենակարեւորն է, նա է՝ որ Աստծուն յայտնում է որպէս սէր, որ ցոյց է տալիս Յարուցեալ Քրիստոսին եւ որ մեզ առաջնորդում է դէպի Նա: Կինը հաւատքի ուսուցչուհի է: Կինը ընտանիքի եւ ամբողջ հասարակութեան արեւն է:

Հետեւաբար, աղօթում ենք, որ կանայք ընդունակ լինեն պահպանելու իրենց կանացիութիւնը, որպէսզի կեանքը չկորցնի իր հմայքը:

Բ) Քրիստոնէական յոյսը: Տիրոջ Յարութեան տօնակատարումը մարդու առաջ բացում է մի նոր յոյս: Մեղքի եւ մահուան իշխանութիւնը պարտուել է սիրոյ զօրութեամբ, Տիրոջ Յարութեամբ: Այժմ մարդը կարող է յուսալ, հակառակ ճախողման բոլոր երեւոյթների: Այժմ մարդը կարող է վստահութեամբ դիտել ապագան, հակառակ բազմատեսակ վտանգների, որոնցով լի է այս կեանքը: Այժմ մարդը կարող է կեանքի ընթացքը սկսել կամ վերսկսել՝ սիրով ու քաջութեամբ պայքարելով ճշմարտութեան համար, իմանալով՝ որ յուսախաբ չի մնալու: Ով իրեն զգում է վհատուած, թող գա՛ դիտելու փրկութեան խորհուրդը. ով իրեն գրեթէ յուսահատ է զգում չարիքի խաբէութեան առաջ, թող անսասան մնայ. Քրիստոս յարութիւն է առել: Ով իրեն զգում է ընկճուածութեան, ֆիզիքական, հոգեբանական կամ բարոյական անկումի գերի, թող իմանայ՝ որ մահը պարտութեան է մատնուել եւ որ մարդն այժմ կարող է տեսնել Աստծոյ սիրալի Դէմքը: Ինչպիսի՛ անսահման սէր ունի Աստուած մեր նկատմամբ, որ առաքեց Իր Որդին, որպէսզի զոհաբերուէր, մահանար եւ յարութիւն առնէր, եւ այդպէս մեր առաջ բացէր Երկնային Արքայութեան դռները: Այո՛, բոլոր սրտերը այսօր թող վերագտնեն իրենց վստահութիւնը. **ՕձԹԵ՛՛՛ à è Ú² ð°² ð Æ Ø° è° È à ò: ú ð Û Õ°² È ¾ Ú² ð à ò Æ Û Û Õ ð Æ à è Æ**

